ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Իտալիայի Հանրապետություն (Միլան) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Արսեն Թորոսյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Իտալիայի Հանրապետություն (Միլան), 2025 թվականի նոյեմբերի 24-ից 26-ը

3. **Հրավիրող կողմը.**
   Իտալիայի Հանրապետության հաշմանդամություն ունեցող անձանց հարցերի նախարար Ալեսսանդրա Լոկատելլի

4. **Գործուղման նպատակը.**
   Երկկողմ համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր քննարկելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**
   Այցի շրջանակում կայացած հանդիպումների ընթացքում քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար համայնքային փոքր խմբային տների կառուցման, զբաղվածության և ներառականության, մատչելի և հավասար պայմանների ապահովման ոլորտներում Իտալիայի հետ համագործակցության և փորձի փոխանակմանն առնչվող հարցեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Իտալիայի Հանրապետության հաշմանդամություն ունեցող անձանց հարցերի նախարարության միջև՝ 2025 թվականի հունիսին Երևանում ստորագրված համագործակցության մասին հուշագրից բխող գործողությունների իրականացման համատեղ ծրագրերը և միջոցառումները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Աշխատանքային այցի շրջանակում հանդիպել եմ Իտալիայի Հանրապետության հաշմանդամություն ունեցող անձանց հարցերի նախարար Ալեսսանդրա Լոկատելլիի հետ, որի ընթացքում քննարկվել են երկու երկրների աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի առաջնահերթությունները, մասնավորապես՝ ընդգծվել է անհրաժեշտ աշխատանքների իրականացման և փորձի փոխանակման կարևորությունը՝ հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների բարելավման գործընթացում:
   Այս համատեքստում կարևորվել է հաշմանդամություն ունեցող անձանց համար համայնքային փոքր խմբային տների կառուցման, զբաղվածության և

ներառականության ապահովման ոլորտներում Իտալիայի հետ համագործակցությունն ու փորձի փոխանակումը:
Ներկայացվել է խոցելի խմբերի համար Իտալիայում իրականացվող պետական ծրագրերը, դրանց իրականացման գործընթացում պետության և համայնքների փոխգործակցությունը:
Քննարկել ենք նաև սույն թվականի հունիսին Երևանում ստորագրված համագործակցության հուշագրից բխող գործողությունների իրականացման ընթացքն ու հետագա անելիքները:

Ալեսսանդրա Լոկատելլիի հետ այցելել եմ Միլանի խոշորագույն բժշկական կառույցներից մեկը՝ Նիգուարդայի հիվանդանոց (1200 մահճակալային հզորությամբ), ինչպես նաև «Centro Nemo» մասնագիտացված կենտրոն: Հիվանդանոցի տնօրենը ներկայացրեց մատուցվող բուժական և վերականգնողական ծառայությունների ամբողջական շրջանակը՝ առանձնապես շեշտելով ձիաբուժության (հիպոթերապիայի), այրվածքաբանության և նեյրոմկանային հիվանդությունների ուղղությամբ իրականացվող ծրագրերը: Հիվանդանոցը սպասարկում է ինչպես տեղում գտնվող պացիենտներին, այնպես էլ դրսից ժամանող հիվանդներին՝ առանձնակի ուշադրություն դարձնելով երեխաներին:
Այցելել ենք նաև նեյրոմկանային հիվանդություններով անձանց համար նախատեսված բաժանմունք, որտեղ իրականացվում են ժամանակակից դեղամիջոցների կլինիկական փորձարկումներ՝ ուղղված պացիենտների բուժման արդյունավետության բարձրացմանը:

Միլանում Ալեսսանդրա Լոկատելլիի հետ այցելել ենք նաև հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների ասոցիացիայի կողմից ղեկավարվող «Bottegaio NoStrano» օրգանական սննդի խանութ, որտեղ բոլոր հարմարեցումներն արված են հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային պայմաններն ապահովելու համար: Խանութի գործունեությունից առաջացած ողջ հասույթն օգտագործվում է հաշմանդամություն ունեցող անձանց ասոցիացիայի կարիքները հոգալու համար, որն իր հերթին զբաղվում է վերջիններիս անկախ կյանքը կազմակերպելու, տնային պայմաններում օգնականների ծառայությունների, ինչպես նաև այլ ներառական միջոցառումներ անցկացնելու համար:
Կարևորելով խոցելի խմբերի զբաղվածության, մատչելի և հավասար պայմանների ապահովման, սոցիալական ներառման և ինքնարտահայտման հնարավորությունների ստեղծմանն ուղղված աշխատանքները՝ ընդգծել եմ, որ սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվելն այդ ճանապարհներից մեկն է:
«Bottegaio NoStrano» օրգանական սննդի խանութում շփվել ենք աշխատակիցների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ, ծանոթացել խանութի գործունեության կազմակերպման մանրամասներին, կատարել գնումներ:

Նախարար Ալեսսանդրա Լոկատելլիի ուղեկցությամբ այցելել ենք հաշմանդամություն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց, հատկապես երեխաների համար նախատեսված «Cometa» անկախ կյանքի կենտրոն և «Agora 97» սոցիալական կոոպերատիվ, որի ենթակայության տակ գործում են համայնքային փոքր տներ, որոնք իրենց հերթին ծառայություններ են մատուցում հաշմանդամություն ունեցող անձանց և կյանքի դժվարին իրավիճակներում գտնվողներին:
Շրջել ենք կենտրոններում, ծանոթացել պայմաններին, մատուցվող ծառայություններին, շփվել բնակիչների հետ: Շրջայցի ընթացքում խոսել ենք հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովման, ըստ կարիքի՝ ամբողջական և մասնագիտացված ծառայությունների տրամադրման անհրաժեշտության մասին:
Իտալացի գործընկերոջս ներկայացրել եմ Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձանց համար պետական առաջին անկախ կյանքի կենտրոնի կառուցման մանրամասները՝ նշելով, որ այն հնարավորություն է տալու հաշմանդամություն ունեցող անձանց օգտվել անհրաժեշտ ծառայություններից, այդ թվում՝ սոցիալ-վերականգնողական, զարգացման թերապիա, ինչպես նաև ձեռք բերել և զարգացնել անկախ կյանքի հմտություններ՝ հասարակության մեջ լիարժեք ներառվելու և ինքնադրսևորվելու նպատակով:

Իտալիայի Հանրապետություն այցի շրջանակում մասնակցել եմ Cometa կենտրոնի կողմից կազմակերպված «Օժանդակություն և տեղական բարեկեցություն» թեմայով գիտաժողովին և հանդես եկել ելույթով:
Ելույթում խոսել եմ երկու երկրների բարեկամական հարաբերությունների և ընդհանուր արժեքների պահպանմանն ուղղված ջանքերի մասին՝ նշելով, որ տարբեր ոլորտներում երկկողմ և բազմակողմ արդյունավետ համագործակցությունը զարգացել է ամուր գործընկերության և փոխադարձ հարգանքի հիման վրա: Հատուկ անդրադարձ եմ կատարել նաև Հայաստանի սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված վերջին բարեփոխումներին ինչպես նաև զբաղվածության, ժողովրդագրության ռազմավարություններին, որոնց նպատակն է ունենալ մարդակենտրոն, ներառական և մարտահրավերներին պատրաստ սոցիալական համակարգ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նիգուարդայի հիվանդանոց կատարած այցի ընթացքում կայացած քննարկումների արդյունքում ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածությունները՝

- ✓ համագործակցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հիպոթերապիայի կենտրոնի հետ,
- ✓ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ նախաձեռնել համագործակցություն այն բժշկական և վերականգնողական կենտրոնների հետ, որոնք սպասարկում են նեյրոմկանային ատրոֆիա և դիստրոֆիա ունեցող պացիենտներին,
- ✓ ձևավորել համագործակցություն պացիենտներին մատուցվող կոնկրետ ծառայությունների շրջանակում՝ փորձի փոխանակման և համատեղ ծրագրերի իրականացման նպատակով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

X

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N
1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ***ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ***ՀՀ վարչապետի 11.11.2025 թ.-ի 1025-Ա որոշում***

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

ՀՀ ԱՍՀՆ նախարար՝ Արսեն Թորոսյան

4. Գործուղման վայրը-***Իտալիայի Հանրապետություն՝ Միլան***

5. Գործուղման ժամկետները ***24.11.2025 թ.-26.11.2025 թ.***

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*թվարկել՝ ճանապարհածախս,* ***գիշերավարձ****, օրապահիկ և այլն*)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- ***ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը***
- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը	***Արսեն Թորոսյան***	***Ընդամենը (հազ. դրամ)***

Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը **(էկոնոմ դաս,** բիզնես դաս)	-	**-**
	Ավիատոմսի և ավիատոմսի ամրագրման արժեքը (դրամ)	110,877	***110,877***
Գիշերա-վարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	**-**	**-**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (EUR եվրո)	156	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	68,869	-
	Օրերի քանակը	3	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	***206,607***	***206,607***
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			***317,484***

****օրապահիկի հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՀ կենտրոնական բանկի «27» «նոյեմբերի» 2025 թվականի 1 եվրոյին համարժեք 441.47 ՀՀ դրամի չափը***

ԱՍՀՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ԲԱԼՅԱՆ

X